Հայաստանի Հանրապետությունում

Արժույթի միջազգային հիմնադրամի

մշտական ներկայացուցիչ

պարոն Մեհդի Ռահսսիին

Թեմա՝ Պահուստային ծրագրի միջոցների օգտագործում

Հարգելի՛ պարոն Ռահսսի,

Հղում անելով մեր վերջին պայմանավորվածություններին՝ պատիվ ունեմ դիմելու Արժույթի միջազգային հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը Պահուստային ծրագրի ներքո 51.428 միլիոն ՀՓԻ-ին համարժեք բյուջետային աջակցության տեսքով վարկ տրամադրելու նպատակով՝ հետեւյալ պայմաններով.

Մասհանում. փոխառու միջոցները, ներառյալ՝ Պահուստային ծրագրի շրջանակում կուտակված գնման իրավունքները (ընդհանուր՝ 51.428 մլն ՀՓԻ-ին համարժեք գումար), կմասհանվեն 2022 թվականին մեկ մասնաբաժնով՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուն պես:

Մարում. Պահուստային ծրագրի ներքո ստացված փոխառու միջոցները ենթակա են մարման մասհանումից հետո 3.25-5 տարվա ընթացքում, ինչը նշանակում է, որ մասհանումը մարվելու է ութ հավասար եռամսյակային մարումներով՝ սկսած յուրաքանչյուր մասհանումից 3.25 տարի անց:

Վարկավորման տոկոսադրույք. վարկավորման տոկոսադրույքը բաղկացած է՝ 1) շուկայական ՀՓԻ տոկոսադրույքից, որն ունի նվազագույն 0.05 տոկոսի շեմ, եւ մարժայից (ներկայումս՝ 1 տոկոս) (միասին՝ բազիսային տոկոսադրույք), եւ 2) հավելավճարներից, որոնք կախված են չմարված վարկի գումարից եւ ժամանակից: 2

տոկոս հավելավճար է վճարվում վարկի մնացորդի՝ քվոտայի 187.5 տոկոսը գերազանցող գումարի համար: Եթե երեք տարի անց վարկը մնում է քվոտայի 187.5 տոկոսից բարձր, ապա այս հավելավճարը բարձրանում է մինչեւ 3 տոկոս:

Պարտավորության վճար. Պահուստային բոլոր ծրագրերի ներքո ստանձնած միջոցները ենթակա են պարտավորության վճարի, որը գանձվում է յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում այն գումարների նկատմամբ, որոնք կարող են մասհանվել այդ ժամանակահատվածում (0.15 տոկոս՝ մինչեւ քվոտայի 115 տոկոսը չգերազանցող գումարների դեպքում, 0.3 տոկոս՝ քվոտայի 115 տոկոսից մինչեւ 575 տոկոսը, եւ 0.6 տոկոս՝ քվոտայի 575 տոկոսը գերազանցող գումարների դեպքում): Այս վճարները համամասնորեն վերադարձվում են, եթե գումարները մասհանվում են համապատասխան ժամանակահատվածի ընթացքում:

Ծառայության վճար. 0.5 տոկոսի չափով ծառայության վճար է կիրառվում յուրաքանչյուր մասհանված գումարի նկատմամբ:

Եթե վերոնշյալ դրույթներն ընդունելի են Արժույթի միջազգային հիմնադրամի համար, ապա պատիվ ունեմ առաջարկելու, որ սույն նամակը եւ Ձեր պատասխանը միասին կկազմեն համաձայնագիր (Համաձայնագիր), որն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Արժույթի միջազգային հիմնադրամը ծանուցում ստանա Հայաստանի Հանրապետության կողմից դրա՝ ուժի մեջ մտնելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ներքին ընթացակարգերի ավարտի մասին:

Ընդունե՛ք, խնդրում եմ, իմ հարգանքի խորին հավաստիքը:

Հարգանքով՝

/ստորագրություն/

Տիգրան Խաչատրյան

18 հունվարի, 2022թ.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար

Պարոն Տիգրան Խաչատրյանին

Հարգելի՛ նախարար Խաչատրյան,

Ի պատասխան 2022 թվականի հունվարի 11-ի Ձեր գրության՝ ուրախ եմ հաստատել, որ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր խորհուրդը 2021 թվականի դեկտեմբերի 17-ին ամփոփել է Պահուստային ծրագրի աջակցությամբ իրականացվող տնտեսական ծրագրի ներքո Հայաստանի Հանրապետության կատարողականի չորրորդ եւ հինգերորդ վերանայումները: Այս վերանայումների ամփոփումն իշխանություններին թույլ է տվել մասհանել 51.428 միլիոն ՀՓԻ-ին համարժեք գումար՝ Պահուստային ծրագրի ներքո արված ընդհանուր մասհանումները հասցնելով 283.084 միլիոն ՀՓԻ-ին համարժեք գումարի: Եռամյա Պահուստային ծրագիրը հաստատվել է ԱՄՀ-ի խորհրդի կողմից 2019 թվականի մայիսի 17-ին եւ ընդլայնվել է 2020 թվականի մայիսի 18-ին՝ ընդհանուր 308.8 միլիոն ՀՓԻ-ին համարժեք գումարի չափով (ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության քվոտայի շուրջ 239.75 տոկոսը):

Պահուստային ծրագրի ներքո արվող մասհանումների նկատմամբ կիրառվում են հետեւյալ պայմանները.

- *Մարում.* Պահուստային ծրագրի ներքո ստացված միջոցների մարումը ենթակա է մասհանման յուրաքանչյուր մասհանմանը հաջորդող 3.25-5 տարվա ընթացքում, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր մասհանում մարվելու է ութ

հավասար եռամսյակային մարումներով՝ սկսած յուրաքանչյուր մասհանումից 3.25 տարի անց:

- *Վարկավորման տոկոսադրույքը.* ֆինանսավորման վճարները բաղկացած են՝ 1) շուկայական ՀՓԻ տոկոսադրույքից, որն ունի նվազագույն՝ 0.05 տոկոսի շեմ, եւ մարժայից (ներկայումս՝ 1 տոկոս) (միասին՝ բազիսային տոկոսադրույք), եւ 2) հավելավճարներից, որոնք կախված են չմարված վարկի գումարից եւ ժամանակից: 2 տոկոս հավելավճար է վճարվում վարկի մնացորդի՝ քվոտայի 187.5 տոկոսը գերազանցող գումարի համար: Եթե երեք տարի անց վարկը մնում է քվոտայի 187.5 տոկոսից բարձր, ապա այս հավելավճարը բարձրանում է մինչեւ 3 տոկոս:

- *Պարտավորության վճար.* Պահուստային բոլոր ծրագրերի ներքո ստանձնած միջոցները ենթակա են պարտավորության վճարի, որը գանձվում է յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում այն գումարների նկատմամբ, որոնք կարող են մասհանվել այդ ժամանակահատվածում (0.15 տոկոս՝ մինչեւ քվոտայի 115 տոկոսը չգերազանցող գումարների դեպքում, 0.3 տոկոս՝ քվոտայի 115 տոկոսից մինչեւ 575 տոկոսը, եւ 0.6 տոկոս՝ քվոտայի 575 տոկոսը գերազանցող գումարների դեպքում): Այս վճարները համամասնորեն վերադարձվում են, եթե գումարները մասհանվում են համապատասխան ժամանակահատվածի ընթացքում: Արդյունքում, եթե երկիրը մասհանում է Պահուստային ծրագրի ներքո ստանձնած ամբողջ միջոցները, պարտավորության վճարն ամբողջությամբ վերադարձվում է: Այնուամենայնիվ, վերադարձ չի իրականացվում կանխարգելիչ Պահուստային ծրագրերի համար, որոնց ներքո երկրները մասհանում չեն իրականացնում:

- *Ծառայության վճար.* 0.5 տոկոսի չափով ծառայության վճար է կիրառվում յուրաքանչյուր մասհանված գումարի նկատմամբ:

Եզրափակելով՝ թուլ՛յլ տվեք պարզաբանել, որ Ներկայացված պայմանների նկատմամբ կիրառվող ղեկավար սկզբունքների վերաբերյալ ԱՄՀ-ի ուղեցույցի 9-րդ

կետի համաձայն՝ ԱՄՀ կարգավորումները չեն համարվում միջազգային համաձայնագրեր:

Ընդունե՛ք, խնդրում եմ, պարո՛ն նախարար, իմ խորին հարգանքի հավաստիքը:

Հարգանքով՝

/ստորագրություն/

[կնիք]

Մեհդի Ռահսսի

Հայաստանում ԱՄՀ մշտական ներկայացուցիչ

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործում» նամակ-համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն